

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՂԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Հանրակրթության պետական չափորոշի համաձայն՝ «Հասարակագիտություն» առարկան «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառը ներկայացնող պարտադիր ինտեգրված առարկա է հիմնական դպրոցի 8-9-րդ դասարանների և ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների համար:

«Հասարակագիտություն» ինտեգրված առարկան միջին դպրոցում ներառում է նախնական գիտելիքներ փիլիսոփայությունից, իրավագիտությունից, բարոյագիտությունից, գեղագիտությունից, իսկ ավագ դպրոցում այն ներառում է գիտելիքներ գեղագիտությունից, բարոյագիտությունից, հոգեբանությունից, տնտեսագիտությունից, իրավագիտությունից, քաղաքագիտությունից, փիլիսոփայությունից:

«Հասարակագիտություն» առարկայի «Իրավագիտություն» բաղադրիչի նպատակը իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող քաղաքացու ձևավորումն է: Իրավագիտակցությունը, լինելով հասարակական գիտակցության ձևերից մեկը, մարդկանց, նրանց միավորումների, ամբողջ հասարակության հայացքների, գաղափարների, պատկերացումների ամբողջությունն է իրավունքի և իրավական երևույթների վերաբերյալ: Իրավագիտակցությունը նպաստում է իրավունքի ուսումնասիրությանը, ուստի և նրա իմացությանը:

Աշակերտները, ունենալով բարձր իրավագիտակցություն, կտիրապետեն իրենց հիմնական իրավունքներին ու պարտականություններին և, հարկ եղած դեպքերում, կկարողանան իրացնել իրենց իրավունքները ու ընդհանրապես, ավելի բարեխճորեն կբերաբերվեն իրենց պարտականությունների կատարմանը:

2001-ից հանրակրթական դպրոցների 8-րդ դասարաններում դասավանդվում է «Մարդու իրավունքներ» առարկան, 9-րդ-ում՝ «Քաղաքացիական կրթությունը», 10-րդ-ում՝ «Պետություն և իրավունքը»:

Եթե աշակերտները առավելագույնս յուրացնեն այս առարկաներից ստացած գիտելիքները, լավատեղյակ կլինեն իրենց իրավունքներին, երկրի պետական կարգին և ավելի հասուն կլինեն՝ որպես քաղաքացի: Նշված առարկաների դասերի ընթացքում դպրոցականներն ուսումնասիրում են երեխայի, սեփականության, ազատ ընտրության իրավունքների և այլ հարցերի մասին թեմաներ:

Աշակերտների իրավագիտակցության մակարդակն էլ ավելի բարձրացնելու և զարգացնելու համար նպատակահարմար կլինի, որ դպրոցները փաստաբաններին հրավիրեն՝ պրակտիկ դասեր անցկացնելու աշակերտների հետ:

Նման դասընթացները կնպաստեն աշակերտների կողմից ստացած գիտելիքներն ամրապնդելուն՝ փաստաբաններին տրվող հարցերի և գործնական դասընթացների շնորհիվ:

Տաթևիկ Շալջյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ